

4944

Ի. ԱԿՈՒՐԱՑԵՐ


ՄԻՆԻԱՏԻՒՐՆԵՐ

(38)

Թարգմանեց

Սիլ. ԲԱՅԻԵԼՅ.

155



Նոր. Նորի վան
տպար. Ս. Յ. Աւազեանի.

1911.

89193

Ա-41/10



ԿԿ



Ի. ԱԿՈՒՐԱՏԵՐ

ՄԻՆԻԱՏԻՒՐՆԵՐ

(Արտաստպութիւն «ՀՈՅՍ» շաբաթաթերթից)

1001
1925
9

Թարգմանեց
ՄԻՄ. ԲԱՅԻՆԱՆ.

Նոր-Նախիջևան
Տպարան Ս. Յ. Ասգենիկի.

1911.

200

ԵՐԿՐԻ ԽԹԱՔ.

Երիտասարդ լուսը գրող ի. Ակուբանէրը
ծնուել է 1875 թուի դեկտեմբերի 31-ին Հա-
տըշական նորագոյն գրականութեան ամենա-
նշանաւոր ներկայացուցիչներից մէկն է նա: Նրա
ջահելութիւնն անցել է տխուր հանգամանքնե-
րում: Եւ ահա մասամբ նրանց շնորհիւ, մասամբ
էլ այն ծանր գարաջանի տպաւորութեան տակ,
որ ազգել է հարազատ ժողովուրդը, նրա պօէ-
զիայի բնարերգութիւնը մերթ կրում է իր վրայ
մի խաղաղ, թագցրած տիրութեան երանգաւո-
րում, մերթ յանկարծ գառնում է զայրոյթի մի ուժ-
գին հոսանք՝ չարութեան և անարդարութեան դէմ:

Զնայած նրա սիւժէտների մռայլութեան՝
նրա պօէզիան լի է լաւագոյն, լուսաւոր տպա-
գայի հաւտոտվ, կարծես թէ հաստատելով այն
ձշմարտութիւնը, թէ՝ գաղափարի համար մղում
կուռմ նրանք, ովքեր մնում են մարտի գաշ-
տում, ոչինչ չեն կորցնում, որովհետեւ մահացած
էլ կարելի է յաղթող մնալ:

Մարդասիրութեան և արդարութեան գա-
ղափարները պաշտպանելով՝ նա, որպէս ինդի-
վիդուալիստ, հեռու է որ և է կուսակցական ո-
գուց, իսկ նրա շօշափած թեմաներն այնքան են
մօտիկ իր հայրենիքի շահերին, որ նա համա-
րեա ժողովրդական գրող է դառնել:

Նրա մինիատիւրներից մի քանիսը՝ ամե-
նից աւելի ժողովրդականացածները, հաւաքուած
են մի ժողովածուի մէջ, որ կրում է «Աստղա-
փայլ գիշեր» վերնագիրը: Բացի այդ՝ նա գրել է
«Մարդը», «Սատանայի երազը» Փանտազիան և
ուրիշները:

Ա. Բ.

I. ՄԵՆԱԿՈՂԻԹԻՒՆԸ.

Գիտես արդեօք, բարեկամս, թէ ինչ է մենակութիւնը, Քեզ հմ հարցնում. ուզում հմ իւմանալ՝ յաճախում է արդեօք այդ տարօրինակ հիւրը քեզ էլ:

Նա այժմ ինձ մօտ է: Ես անզօր հմ պատմելու, թէ որքան մուայլ է նա, որքան ծանր, երբ յենուում է ուսերիս վրայ և գնում ինձ հետքայց նա ունի մի անմեկին անոյշ բան, և ես, գտնուելով այդ թովքի ազգեցութեան տակ, ուրախութեամբ սեղմում հմ նրան կրծքիս, համբուրում հմ, հրճում և զգում հմ, թէ ինչպէս արցունքս է թափում: Բայց դա երջանկութեան, ուրախութեան կամ թախիծի արցունք չէ, այլ մի արցունք, առանց որի չեմ կարող ապրել:

Գիտես արդեօք, թէ ինչ է նշանակում մենակ լինելը: Արդեօք կանգնած ես եղել երբ և իցէ մթութեան մէջ՝ երբ շուրջը լուսութիւն է տիրել՝ ամենքից մոռացուած, չհասկացուած և աչքաթնդ եղած, ինչպէս մի խելագար, կեանքին անպէտք մի մարդ: Արդեօք ծանծթ է քեզ այն խենթ թախիծը և այն իդը՝ մօտդ մի էակ ունենալու, որի ուսի վրայ կարողանայիր թեքել գլուխի և պատմել նրան ամեն բան, ինչ որ երաղել ես, ինչով տանջուել եսև թէ ուր ես

Ճամբադ ուղղում. բայց պատմել այնպէս, ինչպէս այդ անում է երեխան իր մօր ձեռքերում, առանց վախենալու, որ չհասկացուած և չնկատուած կը մնայ: Ա՛խ, ինչպէս սիրտդ այդ ժամանակ ապրել է ուզում:

Մի պայծառ հայեացք, մի հպալու միտք— ամեն ինչ այդ է կանչում այդ ժամին:

Շուրջը սարդկանց ամբոխն է աղմկում. նրանք ուրախանում են, լալիս և վայելում երջանկութիւն—և այդ բաւական է նրանց համար: Բայց քեզ համար քիչ է այդ, դու չես կարող հասկանալ նրանց ուրախութիւնը և արցունքը. դու համակլութիւն չունիս—դա մենակութիւն է: Նա, ասես, սիրահարուում է վրադ, կախարզում է քեզ և արհամարհում, և դու այդ ժամանակ մենակ ես...

Եւ այդ ժամանակ նա սկսում է պատմել. դու լսում ես և չես հաւատում այդ հրաշալի պատմութեանը. նա նման է երեխայական հէրիաթների, որոնցով դու մաքրում ես, զգում ես այնպիսի ուրախութիւն և երջանկութիւն, ինչպիսիները մինչ այդ չեիր տհել: Դու մեծ ես գառնում, թախիծդ այլ ես չկայ, դու յաղթեցիր...

Դու դուրս ես գալիս մենակութեան կապանքներից սպիտակ զգեստով, այրող սէրը հոգումդ, կենսալի և անդորր: Մենակութիւնը քեզ կարծես գերեզմանից արթնացրից—այդպէս է նա:

Ծանծթ է արդեօք քեզ, ընկեր, այդպիսի մենակութիւնը:

II. ԱՂՔԱՑՈՒԽԹԻՀԻՆԸ.

Իմ աղքատութիւն—բանսի վորքիկ լուսամուտից ես նայում եմ կեանքի տօնի վրայ: Ուշախ մարդիկ խմբերով գնում են լուսաւոր ուղիներով: և լուսմ եմ ես, թէ ինչպէս նրանց սրտիրը երջանկութիւն և ուրախութեան լեզուով են խօսում: Տեսնում եմ, թէ ինչպէս քամին համբուրում է ծաղկող ծառերը, և ինչպէս նրանց վրայից ընկնում են մաքուր արցունքերը:

Ես տեսնում եմ արեգուկը:

Տեսնում եմ նաև կապոյտ երկինքը՝ ձիւափայլ ասսպերով և երկնքի հնուում քնած ամպը: Եւ հոգիս լալիս է, որովհետև այդ բոլորը տեսնում եմ փոքրիկ լուսամուտից, ես բանտումն եմ:

Բայց իմ ոյժերն սկսում են զարթիլ, և իմ ցանկութիւնների անսանձ երգը ձգտում է դէպի այնտեղ... դէպի լայն, լուսաւոր և մաքուր կեանքը: Խնճթ թափիծն ընդգրկում է ինձ, և ամեն ինչ ինձ չնշին է թւում: Ո՞վ կարող է արգելել ինձ: Ես կ'երթամ...

Բայց իմ գիտաւորութիւնները ջարգւում են, կարծես զարնուելով ումուր, երկաթէ վանդակի, և ես նայում եմ ու չեմ հաւատում ինքս ինձ: Ես շղթայուած եմ: Հազիս—հին ցնցոտիներ, անդամներս թմրել են, և իմ բանտում ցուրտ է: Աղքատութիւն...

Ինձ մօտ է կանգնած նա՝ կեղտոտ, գորշ և լրբաբար ծիծաղելով, զրկում է ինձ և խեղդում իր ոսկրոտ ձեռքով...

Սյդպէս անցաւ իմ ջահէլութիւնը, որը նա երկար օրեր ու տարիներ բռնած էր ունեցել նեղ հիւղի մէջ...

Ինչ էլ լինի՝ մի անգամ ես կը հեռանամ նրանից: Այժմ ես աւելի ոյժ ունիմ, և պէտք է ճողոպղեմ...

Ես ուզում եմ ցայժմ անյալտ մի երջանկութիւն և աղքատութիւն վայելել: Աղքատութիւն...

Եւ, վերջապէս, ոսկին կը գնդզնգայ իմ գըրշապաններում: Իմ ձեռքերը կը լեցուին մարդարիաններով, ինձ թոյլատրուած կը լինի ապրել:

Եւ այն ժամանակ ես կ'երթամ նրա—աղքատութեան—մօտ, կը ձգեմ մարդարիտն ու ոսկին նրա ոսների մօտ, իսկ ինքս կը հեռանամ՝ մենակութեան մէջ լալու կորցրած ջահէլութիւնը և այն մաքուր ու անմեղ էակների համար, որոնց արցունքները թափուել են նրա բանտում...

Նոյն իսկ ամբողջ աշխարհի ոսկով ես այլ ևս չեմ գնի նրան. բացի գրանից՝ ալեոր գլխի համար ջահէլութիւնն ուրախութիւն չէ,—նաթաղուած է աղքատութեան բանտում:

III. ՍԱՐԿ Ի ՎԵՐ

Մառախնուզն է մեր ետեռում՝ մեզանից ցած—աշնանային պաղ, անթափանց մառախուզը: Ինչպէս գիշերային ուրուական, նա ծածկում է երկիրը իր լայն թներով: Գիշեղմանային լոռութիւն և մահ է շնչում նա... Մեր գիմացը լին է կանգնած՝ անհաւասար, ժայռոտ մի կոյտ:

Եւ մենք ուզում ենք ելնել սարն ի վեր,—մենք գնում ենք: Ո՞չ, մենք չէինք ուզում, մի անծանօթ ոյժ, փոթորիկի նման, տարաւ մեզ և

վեր բարձրացրեց, իւլ մենք միայն մի զգաց-
մունք, մի խօսք դիտէինք. «սարն ի վեր»:

Ժամանակ առ ժամանակ մենք կանգ ենք
առնում և յիտ նայում այն թանձր մառախուղի
վրայ, որից դեռ նոր դուրս եկանք: Լաւ էր ար-
դեօք այնտեղ: Հենց այնտեղ դեռ շատերն են
մնացել. նրանց համար տաք է այնտեղ և հան-
գիստ... Հանգիստ: Ոչ, մենք հանգստութիւն
չենք կամենում նրանց: Մենք փնտրում ենք այն
էակի համբոյրը, ով մեր հոգում վառեց ցանկու-
թիւնների յաւերժակէզ հուըը և կանչեց և հրա-
պուրեց մեզ գնալ հեռու ու աւելի հեռու, սարն
ի վեր: Նա մեզ երջանկութիւն խոստացաւ, այն-
պիսի՛ երջանկութիւն, որից նոյն իւլ լացդ էր
զալիս:

Եւ մենք գնում ենք սարն ի վեր, մենք՝
մենակ, առանց ընկերների և ճամբի... Մեր շուր-
ջը չկայ կեանք և լոյս, միայն քրքիջ ու ծա-
նակներ են հասնում մեզ ներքեից. դրանք կուշ-
տերի և յիմարների ծիծաղներն են—նրանք յիտ
են կոնչում մեզ...

Մառախուղն աւելի վեր է բարձրանում և
ծածկում է մեր ճամբան. մութն՝ ինչպէս ցանց՝
պատում է մեզ. խաւարը և կասկածները նստում
են մեր հոգու վրայ, մեր կրծքերը յոգնում են,
ոտքներս հաղիւ ենք քարշ տալիս և մենք հան-
գիստ ենք առնում քարէ ժայռի վրայ, մենակ,
երկնքի ու երկրի մէջ տեղում: Իսկ ցածում հըն-
չում են անողորմ կերպով. «կը մեռնէք անա-
պատում, այ խենթեր»:

Բայց մենք գնում մենք բարձր ու աւելի
բարձր: Մեր հոգում մենք ուրախանում ենք, որ
մենակ ենք, յոգնածութիւնն ախորժելի է մեզ.

մենք կարծես երեխաներ ենք՝ լի հուատավ դէպի
մեր ոյժերը, առանց հոգսերի և արցունքների...
Այնտեղ՝ դէպի աղատ հեռուն, այնտեղ՝ դէպի վեր:
Իսկ յիտնի:

Մենք արդէն այնտեղ ենք: Մառախուղը
պատել է ստորոտը, անհուն բարձր ստորը վերջա-
ցաւ, և մենք կանգնած ենք նրա գագաթին:

Արե՛ և լոյս: Հարաւային քամի՛: Ծաղիկ-
ների բոյլ և ցնծութիւն: Ընդարձակութիւն և
շողափայլ հեռուներ: Յաւէրժական ընդարձա-
կութիւն և յաւէրժական գարուն: Մենք անմահ
ենք: Մենք աստուածներ ենք: Մենք հասանք
նպատակներիս, այժմ մենք տանն ենք..

Ինչպէս եկանք,—մենք չգիտենք. բայց գի-
տենք այն, որ հազար տնգամ տւելի կը գնայինք
—այնպէս լաւ էր սարն ի վեր գնալը:

IV. ԻՆՉՈՒԻ ԵՍ ՍԻՐՈՒԻՄ ԻՆՉ...

Ինչու ես սիրում ինձ՝ խենթութեան մար-
դուս: Գիտեմ արդիօք ես, թէ որտեղ են բըս-
նում վարդերը, որ նրանցով զարդարնմ քո մա-
զերը և ջանէլ կուրծքգու: Գիտեմ արդիօք ես ա-
նոյշ խօսքեր, որպէս զի մենակութեան մէջ շը-
շնջամ ականջիզ, երբ կամենաս ցնորել:

Ես ոչինչ չունիմ, —ոչ ծաղիկներ, ոչ փա-
ղաքանքներ, ոչ համբոյրներ... Ինչու ես սիրում
ինձ: Երազում ես արդիօք սարքիլ քո «բունիկը»
մի գիւրալի անկիւնում, երազում ես արդիօք
խաղաղ, երջանիկ կեանքի մասին, որն անցնում
է, ինչպէս աշնանային դալուկ, խաղաղ օրը.—
ոչինչ, ոչինչ չունիմ ես:

Ինձ ծանօթ է ժայռերի և անդունդների միջից անցնող ճանապարհը, ես սիրում եմ խաւարը, գիշերը և մերակութիւնը, ուզում եմ յաւէտ ճանապարհորդիլ, ըղձում եմ յաւէրժական մարտերի, Եւ այդ կուել վաղ թէ ուշ ինձ կը քաշէ գէպի իր գիտերի վայրը, և ես կը փտեմ այնտեղ՝ մինակ, մոռացուած... Ո՞վ այն ժամանակ կը շոյէ քո գլուխը և կը խօսէ սիրոյ մասին: Ինչի՞ համար ես սիրում ինձ՝ հիւանդ մարդուս: Գնա այնտեղ, ուր աշխարհն է ծաղկում, ուր առողջ, սիրափափակ մարդիկ ծաղիկներ ևն քաղում և երգեր երգում,—այնտեղ դու կը գլունս քո գարունը: Բայց իր կողքին սէրդ կը մտրի, ինչպէս կրակը գիշերուայ մթնում, և ոչ ոք կարող չի լինի նրան արծարծել և պայծառ բոց դարձնել: Սիրոյ համար պէտք է հանգստութիւն, կանաչ ընդարձակութիւն և սոսկի, իսկ ես աղքատ եմ. իմ միակ գանձը իմ մտքերն են, բայց նրանք խենթ են: Ինչո՞ւ ես սիրում ինձ: Փախիր, փախիր ինձանից:

Թէ այնուամենայնիւ ուզում ես սիրել ինձ և հասկանալ: Ուզո՞ւմ ես սիրել ինձ, իրեւ մի ցնորք, կամ վաղուց մոռացուած մի ինչ որ բան: Այս, այն ժամանակ ես չեմ հարցնի, թէ ինչո՞ւ ես սիրում ինձ, այլ կ'զգամ մօտս մի միակ արարած, որի տաքուկ չինչից կը կիսդանանայ արար աշխարհը և կը ծաղկի ու կը ժպտայ ինձ: Այն ժամանակ ես կ'ապրիմ, կը զտանամ մեծ և հզօր, և ոչ ոք չի իմանայ այն ոյժը, որն ինձ վերացրեց. իսկ գու, ընդհակառակը, կը խամբես, կը թօշնես և կ'ողբաս քո սիրոյ համար...

Ինչո՞ւ ես սիրում ինձ, քանի որ քեզ գուր չեն գալիս արցունքները և վիշտը: Արցունքների

և վշտի վրայ ծիծաղնւմ է աշխարհը. Նա ծիծաղնւմ է նմանապէս քո և իմ վրայ...
Ինչո՞ւ ես սիրում ինձ:

V. ԺԱՅՐՈՒՄ ՎՐԱՅ

Անչափ ու անսահման բարձր է կապուտակ երկինքը, իսկ նրա խորքերում վաստում է արեգակը: Եւ՝ որպէս թախծի և ուրախութեան բանբերներ՝ Աստուած գիտէ, թէ սրահեղից հկած, սպիտակ ամալեր ևն այդ անդունդի վրայով լուզում՝ խաղմդ, ասես կիսաքնի մէջ, ցաւով գըրկուած. Նրանք չեն կարող ընթանալ աղատ ճանապարհով—նրանց տանում են հողմերը...

Ներքեւում իր երախն է բացել անդունդը, մթին, անհանգիստ անդունդը: Կրաքարի շերտեշը միջից ճամբայ է կտրում «սկաչք Դվինան», և յորձանք է տալիս ու շտապում է, ասես, ելք փնարելավ:

Անդունդի վրայ կախուած անկենդան ժայռերը, ինչպէս լեռնային ոզիներ, քննասիրաբար հետևում են նրա ընթացքին: Ալիքները դարնեւում են նրանց, լաց են լինում և իրենց արտասուքներով լուանում ժայռերի ստորոտները, աղատութիւն խնդրելով և չորացած երկրի վրայ թափուել կամենալով: Բայց չեն հասկանում ժայռերը նրանց. պահ են նրանց կրծքերը, նրանք միայն անդները գիտեն:

Կարծր ժայռի վրայ, երկնքի և երկրի միջն, կանգնած է մի ոչ բարձր, ոստալից փիճի: Նա խորն է արձակել ժայռի ճեղքերում իր արմատները, որմնք գրկելով նրան ամեն կողմերից,

ծծում են քարէ զանգուածի կենսատու հիւթերը: Այդ արմատները ձգւում են դէպի անդունքը. նրանք ուղում են անցնել քարերի միջով, քաշել նրա խորքի տամկութիւնը, գէթ մի անգամ յագեցնել իրանց ծարաւը և մոսացուել դով ջների մօտ:

Ժայռի մէջ նրանք փոսիկներ են փորում և գերբնական մի ոյժով շտապում են ներքե, այնտեղից լաւում է վտակի աղմուկը—մանրիկ, թոյլ արմատիկների ըղձալի երգը... Այնտեղ բաղեցը փաթաթւումէ ժայռին, բանում են ջրային ծաղիկներ, մութ-կանաչ թմբիներ և կաղնիներ, այնտեղ պարում են էլֆեր, և երգում են սոխակներ... Իսկ աւելի խորում—անդունդն է... հարիւրաւոր տարիներ են արդէն, որ նրան փընտրում են մանրիկ արմատները և չփուած՝ մեռնում են ժայռերի կրծքին...

Իսկ ժայռի վրայ արեգակն իր շողերն է առատօրէն թափում: Նրանք համբուրում են փիճու կանաչ սստերը, կանչում են վեր բարձրանալ—դէպի անդրամպեայ բարձունքը... Այնտեղ նրանք կը զրուցեն միայն իրար հետ և արհամարհանքով կը նայեն երկրի վրայ, ուր ապրում են այնքան անպէտք արարածներ, առանց զգալու մի չնչին կարիք արեի և ազատութեան:

Հարիւրաւոր տարիներ են արդէն, որ արամատները ճամբայ են փորում իրենց համար ժայռի մէջ և հարիւրաւոր տարիներ են, որ վեր է ձգտում փիճին, ասես աղօթելով: Բայց նա այդպէս էլ կը մնայ՝ խղճուկ, փոքրիկ և կռացած... Մոայլ է հնչում նրա սօսափիւնը, բայց ժայռը ոչին չէ զգում. նրան ծանօթ է միայն յաւէրժական անդորրը...

Յաւէտ երկնքի և երկրի միջև: Առանց փրկութան, անդորրի և ելքի: Երկնքի և երկրի միջև, ժայռի վրայ ևս դու էւ իմ կեանք:

VI. ԱՍՏՂՂ

Երկնքը մինչև հեռաւները զարդարուած է տատղերով: Երկնքը մեռածի պէս լուռ է:

Զավ հովիաներ, զով են սարերը. ամեն ինչ նայում է աստղերին:

Մութ է երկրի վրայ, նա քնած է, որովհետեւ բոլոր աստղերն այնտեղ են՝ վերեռում:

Բայց իմ կրծքում ես ցաւ եմ զգում. նրա տակ ասաղ կայ: Այդ աստղը սիրաս է: Նա վառում է:

Ես կրում եմ անասելի տանջանք և գիշերը հանգիստ չեմ գտնում: Իմ աստղը փափագում է գեղեցկութիւն և ճշմարտութիւն. նա վառում է իմ կրծքի տակ, և ես ցաւ եմ զգում...

Հանգիր, իմ աստղ, ես անդորր եմ ուզում:

Բայց նա վառում է, և ես սիրում եմ նրան. նա էլ աւելի պայծառ է գառնում, իմ սէրն առնում է, իսկ նրա հետ մէկտեղ և ցաւս, մէծ ինչպէս աստղու երկինքը...

Հանգիր, իմ աստղ, ես անդորր եմ ուզում:

«Քանի խաւար կայ, կան և աստղեր. ես կը հանգչիմ այն ժամանակ, երբ կը ծագի քո մեծ արել», և նա վառում է մաքուր, լուսաւոր կերպով և փափագով...

Վառութիր իմ աստղ, ես կամենում եմ քո մեծ ցաւը, կամենում եմ քո երջանկութիւնը:

VII. ԴՐԻ ՄԵՆԵԿ ԵՍ

Դու մենակ էիր, երբ ջանէլութիւնը առանց ուրախութիւնների, պարզ, քիզ հետ էր գնում.

երը կոիւը, տխրութիւնը և արցունքները փայտայում էին քեզ: Քեզ համար վայելչութիւն էր կուելը և տանջուելը...

Դու մենակ էիր...

Դու մենակ էիր, երբ թախծի մէջ, ինչպէս խղճուկ բոյսը ջերմանցում, ձգտում էիր դէպի արեգակի լոյսը: Հին ցնցոտիները ծածկում էին քո կուրծքը, երբ դու ցնորում էիր յաղթանակի մասին... Ո՞վ էր այն ժամանակ հասկանում քո հոգին, ո՞վ էր շշնջում նրան սփոփանքի քնքոյշ խօսքեր: Ո՞վ էր, որպէս ասուղ, նրա խորքը թաթափանցում

Դու մենակ էիր...

Դու մենակ ես... Ա՛յս, հպարտութիւնն ընակեր չէ փնտրում իր համար—և որտեղ կը գտնես այնպիսի մէկին, որ կարողանար հոգուդ ամենանուրբ լարերին դիալչել և երկել մի երգ, քոնին հարազատ: Դու մենակ ես, երբ երկիրը լողում է արեգակի լոյսի մէջ, և երբ անուշաբուրում էն ծաղկած դաշտերը... Դու մենակ ես, երբ հրաշալի գիշերները կանչում են երկրի գտակշներին վայելչել երջանկութեան համբոյը, և երբ ասուղը վառում են գիշերային մթնում, ինչպէս քո թագուն մտքերը:

Դու մենակ ես և այն ժամանակ, երբ քո հոգին աղատութիւն է խնդրում, երբ Ամենազօրը խոնարհեցնում է քո հպարտ գլուխը, և երբ դու ուզում ես լաց լինել այն արցունքների և անէծքների համար, որոնք երկրի հովիտներում կան...

Դու մենակ ես:

Ասս տաճար է քո հոգին. Նա ծաղկում է անմեղ ծաղիկներով, և նրա ձայները հալւում են, ինչպէս մի անոյշ նուագ. բայց մարդիկ սան

են խօսում քեզ հետ: Ոչ ոք չկայ, միս, ոչ ոք, որ քեզ մտերմական ձեռքով գրկէր և կամացուկ շշնջար. «քեզ, իմ մտերիմ, ես հասկանում եմ»:

Դու յաւէտ մենակ ես:

Դու մենակ կը լինես, երբ կուռմ յաղթուած, յոգնած՝ կը հանգստանաս, երբ սիրտդաղիողորմ լաց կը լինի իր կորստի համար—կեանքի երջանկութեան համար:

Ի՞նչ աղատութիւն քեզ այստեղ մենակ ապրելու: Ինչպիսի լսութիւն է թագաւորում քո հոգու մէջ. դու գնում ես նոր աշխարհ որոնելու... Ամեն ինչ թւում է յոգնած, մեռած, միայն մի բան է ապրում—քո հոգարտ «հոը»:

VIII. ԿԵՎԱՐԾՈՅ.

... Եւ ինչպէս որ մութ, պաղ ամպն է ծածկում երկինքն ու արել, ճիշտ այդպէս ինձ հետամուտ է լինում միշտ միւնոյն միտքը, միւնոյն հարցը՝ յաւէտ անլուծելի, ձանձրացրած, բայց անտրոհ մեծ: Հաղար անդամ է նա ինձ մօտ եղել, կարծես պարտապանի մօտ... Գալիս է՝ ինչպէս գիշերային ուրուտական, նստում է կողքիս և շշնջում. «խօսենք»... Որպիսի սարսափ, որքան թախիծ այդ «խօսենք» խօսքի մէջ... Լաօլոնի օձերը չէին կարողանայ խածնել աւելի ցաւազգեցիկ, քան այդ խօսքը. Ես ամբողջովին գողում եմ, ուզում եմ վեր կինակ և փախչել այդ հարցից, շնչել մայիսիան թարմ օդը կապոյտ երկնքի տակ և մոռանալ, որ ես արդէն մի անգամ ապրել եմ աշխարհում:

Բայց չկայ մայիսիան մաքուր օդ, և ես համոզվում եմ որ փախչելը զուր է և անօդուտ...

4944

Մի անգամ որ հաւատացի, թէ կարելի է փախ-
չել կեղասս երկրից և հիւանդ մարդկանցից,
այդ իսկ հարցը, ո՞ն այժմ կապում է ինձ իր
շղթաներով, սպանեց իմ հաւատը:

Եւ այժմ նա՝ ինչպէս գիշեր՝ գալիս է իմ
ետքից և կրկնում է իր յաւէտ փորձող «խօ-
սենք»-ը... Ես լուռ եմ, իսկ նա շշնջում է...

«Միթէ հերիք չէ քեզ համար, գնա՝ հիւանդ
երկակայութիւնով մի խենթ: Զե՞ն երկում ար-
դիօք վրադ կեղծիքի ու աղտեղութեան հնաքեր: Եւ
գու ծիծաղում ես այդպիսի կեանքի վրայ...
Միթէ գու մուրացիկ չես, որին ամեն ոք՝ մօ-
տից անցնելիս, վշրանքներ է ծգում, և չե՞ն արո-
ւում արդիօք քեզ կուշտ և ազնիւ մարդիկ իրանց
ոտներով..»

Այն ամենը, ինչ որ գու վնարում եւ—ե-
րեակայութիւն է, պատրանք: Միթէ գու չե՞ս
հասկանում, որ կեանքի յորձանքը կարող է քեզ
ոչնչացնել մի ակնթարթում...»

Այն ժամանակ կրծող ցաւը տանջնում է ինձ:
Ե՛լ չեմ ուզում լսել լաւ է մեռնել: Ես շտա-
պում, գնում եմ—ուզում եմ խոյս տալ ամեն
ինչից: Բայց երբ՝ յոդնած՝ զլուխս եմ թեքում,
նա՝ մեծ, անյաղթելի իմ հարցը նսառում է կող-
քիս և նորից շշնջում. «խօսենք»...

Բայց ես ոչինչ չեմ ուզում: Իմ բոլոր ան-
դամները կարծես շղթայուած են: Ես թոյլ եմ
տալիս նրան խօսել և սկսում եմ հաւատալ որ
չկայ մի ուրիշ կեանք, բացի այս փոքրիկ, տխուր,
կրքերով լի կեանքից:

Եւ ես մոռացնում եմ ուզում: Ուզում եմ
մահ և անդորր:

ԳԻՒՆ Է 5 ԿՈՊ.

Թարդմանչի հասցեն

Ялта, Набережная аптека

Симеону Бабіану.